- *Տնտեսական աճը դադարեց՝ հոկտեմբերին կազմելով 4.2 տոկոս (տ/տ), հիմնականում պայմանավորված ծառայությունների աճի տեմպի դանդաղմամբ (առանց առևտրի):*
- *Գնաճը նոյեմբերին բարձրացավ մինչև 1.4 տոկոս (տ/տ), որի շարժիչը սննդամթերքը և ոչ ալկոհոլային խմիչքներն էին ու տրանսպորտը:*
- *Ոսկու և զարդերի վերաարտահանման ցուցանիշը թուլացավ, սակայն շարունակեց պայմանավորել արտահանման աճը:*
- *Վարկերի աճը պայմանավորող հիմնական գործոններն էին հիպոթեքային, սպառողական վարկերի և շինարարության ոլորտի վարկավորման աճը :*
- *Պետական ծախսերը հոկտեմբերին ավելի արագ աճեցին, քան եկամուտների հավաքագրումը:*

Տնտեսական ակտիվության աճը դանդաղեց և հոկտեմբերին կազմեց 4.2 տոկոս (տ/տ՝ տվյալ ժամանակահատվածը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ)՝ նվազելով սեպտեմբերի 7 տոկոսից (տ/տ) (պատկեր 1)**:** Աճը պայմանավորող հիմնական գործոնը ծառայություններն էին (առանց առևտրի), որոնց տեմպը դանդաղեց՝ սեպտեմբերի 11.6 տոկոսից (տ/տ) հոկտեմբերին կազմելով 5.2 տոկոս (տ/տ), հիմնականում հյուրընկալության ծառայությունների տեմպի դանդաղման հաշվին: Շինարարության և առևտրի ոլորտներում երկնիշ աճը պահպանվեց, յուրաքանչյուրը կազմելով մոտավորապես 14 տոկոս (տ/տ): Արդյունաբերության աճի տեմպը հոկտեմբերին բարձրացավ մինչև 5.3 տոկոս (տ/տ)՝ սեպտեմբերի 4.6 տոկոսի դիմաց (տ/տ), գլխավորապես պայմանավորված էլեկտրաէներգիայով և էներգետիկայով (21.8 տոկոս, տ/տ): Մշակող արդյունաբերությունն աճեց 6.6 տոկոսով (տ/տ): Հանքարդյունաբերության կրճատումը կազմեց 10.1 տոկոս (տ/տ): Աճողական կտրվածքով՝ տնտեսական ակտիվության ցուցանիշը հունվարից հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում աճել է 8.1 տոկոսով (տ/տ):

Զուտ ոչ առևտրային դրամական փոխանցումները հոկտեմբերին նվազեցին 38.5 տոկոսով (ա/ա՝ տվյալ ամիսը՝ նախորդ ամսվա նկատմամբ) (պատկեր 2): Բոլոր աղբյուրներից զուտ ներհոսքերը հոկտեմբերին նվազեցին (ա/ա), այդ թվում՝ Ռուսաստանից (38 տոկոսով, ա/ա), Միացյալ Նահանգներից (16.2 տոկոս, ա/ա) և մյուս երկրներից (94 տոկոս, ա/ա): Զուտ ներհոսքերը նշանակալիորեն ցածր էին նաև 2023 թ. հոկտեմբերի համեմատ (41 տոկոսով ցածր, տ/տ):

Գնաճը բարձրացավ՝ հոկտեմբերի 0.6 տոկոսից (տ/տ) նոյեմբերին կազմելով 1.4 տոկոս (տ/տ) (պատկեր 3): Նոյեմբերի բարձրացումը հիմնականում պայմանավորված էր սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքների 3.1 տոկոսով բարձր գներով (ա/ա): Չնայած բնակարանների վարձակալության գները հոկտեմբերին ՍԳԻ-ում գրեթե չէին բարձրացել, կադաստրային տվյալները ցույց տվեցին, որ բնակարանային գործարքների գները Երևանի կենտրոնում բարձրացել էին 2.4 տոկոսով (տ/տ). իսկ գործարքների թիվն ավելացել էր 58.6 տոկոսով (տ/տ). ակտիվության մեծացումը պայմանավորված է 2025 թ. հունվարից Երևանում հիփոթեքային վարկերի տոկոսագումարի չափով եկամտային հարկի վերադարձի ծրագրի ավարտով:

Հոկտեմբերին արտահանումն աճեց 23.1 տոկոսով (տ/տ), ներմուծումը՝ 6.6 տոկոսով: Արտահանման աճի տեմպը (տ/տ) դանդաղեց՝ սեպտեմբերի 39 տոկոսի համեմատ և շարունակեց պայմանավորված լինել թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և մետաղների վերաարտահանմամբ: Արտահանման բոլոր գլխավոր ապրանքախմբերում հոկտեմբերին տ/տ աճ գրանցվեց, բացառությամբ մեքենասարքավորումների (նվազումը 19.8 տոկոս, տ/տ): Նշանակալի աճ արձանագրվեց թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և մետաղների (55.5 տոկոս, տ/տ, չնայած 2024 թ. մայիսից նկատված՝ աճի տեմպերի շարունակվող դանդաղմանը), տեքստիլի (59.6 տոկոս, տ/տ), հանքանյութերի (32.5 տոկոս, տ/տ) և սննդամթերքի (27.7 տոկոս, տ/տ) ուղղությամբ: Հաշվի չառնելով թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը՝ ընդհանուր արտահանումն աճել է 9.1 տոկոսով (տ/տ) (պատկեր 4): Արտահանման աճողական ցուցանիշը հունվարից հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում կրկնապատկվել է, իսկ ներմուծումն աճել է 50 տոկոսով, հանգեցնելով 17.9 տոկոսով (տ/տ) առևտրի պակասուրդի նվազման:

Նոյեմբերին ՀՀ դրամը սկսեց արժեզրկվել ԱՄՆ դոլարի և շարունակեց արժևորվել ռուսական ռուբլու նկատմամբ: Մինչև նոյեմբերի վերջը ՀՀ դրամը 1.8 տոկոսով (ա/ա) թույլ էր ԱՄՆ դոլարից և 8 տոկոսով ուժեղ ռուսական ռուբլուց: Միջազգային պահուստները կայուն մնացին՝ նոյեմբերի վերջին կազմելով 3.6 միլիարդ ԱՄՆ դոլար (2.2 ամսվա ներմուծման ծածկույթ):

Առևտրային բանկերի ավանդներն հոկտեմբերին աճեցին 1.3 տոկոսով (ա/ա), վարկերը՝ 2.2 տոկոսով

Կազմեցին ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը, amanookian@worldbank.org, և տնտեսագետ Վիկի Չեմուտայը, vchemutai@worldbank.org

ՀՀ դրամով արտահայտված միջոցների հաշվին: 2023 թ. համեմատ փոխարժեքով ճշտված ավանդներն հոկտեմբերին աճեցին 11 տոկոսով (տ/տ), իսկ վարկերը՝ 23 տոկոսով (տ/տ) (պատկեր 5)։ Աճի երկու երրորդը բաժին է ընկել հիփոթեքային, սպառողական վարկերի և շինարարական վարկավորման աճին։ Ֆինանսական առողջ ցուցանիշները պահպանվել են, ընդ որում կապիտալի համարժեքության հարաբերակցությունը հոկտեմբերին փոքր-ինչ՝ 0.1 տոկոսային կետով բարձրացավ՝ կազմելով 20.5 տոկոս։ Չաշխատող վարկերի ցուցանիշը ցածր է մնացել՝ 1,2 տոկոս, իսկ ըստ ակտիվների եկամտաբերությունը՝ 4,5 տոկոս։

Հոկտեմբերին գրանցվեց բյուջեի 138.5 միլիարդ ՀՀ դրամի (ՀՆԱ 1.34 տոկոսը) պակասուրդ: Հարկային եկամուտները (այդ թվում՝ հիփոթեքին առնչվող եկամտային հարկը) հոկտեմբերին անվանական արտահայտությամբ ընդլայնվեցին 14.9 տոկոսով (տ/տ), որի կեսից ավելին պայմանավորված էր եկամտային հարկի հավաքագրման ավելի բարձր ցուցանիշով (36.5 տոկոսով բարձրացում)։ ԱԱՀ հավաքագրման աճը համեստ էր՝ 1.8 տոկոս (տ/տ), սեպտեմբերի 3,9 տոկոս (տ/տ), աճից նվազելով։ Ընդհանուր ծախսերն հոկտեմբերին ավելացան 25,4 տոկոսով (տ/տ), հիմնականում պայմանավորված 45.5 տոկոս, տ/տ պետական կառավարման (այդ թվում՝ պարտքի սպասարկման), պաշտպանության (64 տոկոս, տ/տ), և սոցիալական պաշտպանության (6 տոկոս, տ/տ) ուղղությամբ ծախսերի աճով։ Կապիտալ ծախսերը հոկտեմբերին աճեցին 44,4 տոկոսով՝ կապիտալ ծախսերի աճողական ցուցանիշը հասցնելով ՀՆԱ-ի 3.4 տոկոսին՝ կապիտալ ծախսերի տարեկան ծրագրի կեսին։ Բյուջեի պակասուրդի տարեկան ցուցանիշը կազմում է 211.5 միլիարդ ՀՀ դրամ (պատկեր 6), որը կազմում է տարեկան ՀՆԱ-ի 2.1 տոկոսը՝ համեմատած 4,7 տոկոս բյուջեի պակասուրդի տարեկան ծրագրի հետ։

Պատկեր 1. Տնտեսական ակտիվության աճը հոկտեմբերին դանդաղեց (տ/տ)

(Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշ, տ/տ փոփոխություն, %)



Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

Պատկեր 2. Ոչ առևտրային դրամական փոխանցումները շարունակեցին նվազել

(հազար ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Պատկեր 3.Նոյեմբերին գնաճը բարձրացավ

(ՍԳԻ գնաճ, տ/տ փոփոխություն, %)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Պատկեր 4. Արտահանման աճը շարունակեց պայմանավորված լինել թանկարժեք քարերի արտահանմամբ

(միլիարդ ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

Կազմեցին ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը, amanookian@worldbank.org, և տնտեսագետ Վիկի Չեմուտայը, vchemutai@worldbank.org :

Պատկեր 5. Առևտրային բանկերի ավանդների և վարկերի երկնիշ աճը հոկտեմբերին շարունակվեց

(տոկոս, տ/տ, փոխարժեքով ճշտված)



Աղբյուրը ՝ՀՀ ԿԲ

Պատկեր 6. Հոկտեմբերին բյուջեում պակասուրդ գրանցվեց

(միլիարդ ՀՀ դրամ)



Աղբյուրը ՝ Ֆինանսների նախարարություն

Կազմեցին ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը, amanookian@worldbank.org, և տնտեսագետ Վիկի Չեմուտայը, vchemutai@worldbank.org :